



1. Փոքրիկ քաղաք Բեթլեհեմի,
Որքան լուռ ես, խաղաղ,
Նընջես դու խոր, մինչ քու վերել
Հսկեն աստղեր չըքնաղ...

Փողոցներուդ մեջ մըթին
Փայլի սուրբ լոյսն անշեջ,
Երկիւղն ու յոյս բոլոր դարուց
Այս լուռ գիշերին մեջ...

Անթիւ սրբոց հետ մեր ալ
Թրթռայ քնարն ոսկեթել,
Մն, շուտ եկնոր բնակէ մեր
մէջ,
Տէրն մեր էմմանուէլ:

2. Քանզի Քրիստոս ծընաւ կոյսէն,
Փըրկիչն ինկած մարդուն,
Մինչդեռ նընջող հէգ
մարդկութիւնն

Հըսկեն զուարթունք արթուն:

Հըռչակեցէք սուրբ Ծընունդ,
Ո՛վ դուք ջահեր այգուն,
Փառք ի բարձունքս Աստուծոյ,
Յերկիր խաղաղութիւն:

3. Ինչպէս լըռիկ ու խաղաղիկ
Տըրուած է այս շընորի,
Ըսքանչելի, աստուածային,
Փառք սուրբ անուանն Անոր:

Այսպէս տայ մարդուն սըրտին
Մեր Տէրն յաւիտենից,
Անպատմելի սիրով անհուն
Օրհնութիւններ երկնից:

4. Ո՛վ սուրբ Մանուկ Բեթլեհեմի,
Իջի՛ր մեզի այսօր,
Թող ըսկըսի մեր մէջ Նոր կեանք,
Ծընունդըդ Նոր, հըզօր: